

Շահումը որոշելու կարգը, շահումների վճարման վայրը, կարգը և ժամկետը

1. Ակնթարթային մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը:

Տոմսի ակնթարթային մասով շահումը որոշելու համար մասնակիցը պետք է մաքրի խաղադաշտերի պահպանիչ շերտերը հետևյալ հաջորդականությամբ՝

- Նախ մասնակիցը պարտավոր է մաքրել «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի երկու խաղավանդակները ամբողջությամբ և «Շահում» նշագրումով խաղադաշտը,

- Այնուհետև «Խաղացող» նշագրումով խաղադաշտի խաղավանդակների մաքրումը մասնակիցը պետք է սկսի միայն ձախից աջ և հետևյալ հաջորդականությամբ՝

Սկզբում մասնակիցը պետք է մաքրի առաջին երկու խաղավանդակները և եթե դրանց պարզ թվաբանական հանրագումարը փոքր է «Խաղարկող» խաղադաշտի խաղավանդակների պարզ թվաբանական հանրագումարից, ապա մասնակիցը կարող է մաքրել երրորդ խաղավանդակը: Եթե երեք խաղավանդակների պարզ թվաբանական հանրագումարը նույնպես փոքր է «Խաղարկող» խաղադաշտի խաղավանդակների պարզ թվաբանական հանրագումարից, ապա մասնակիցը կարող է անցնել չորրորդ խաղավանդակի մաքրմանը:

- «Բոնուս» նշագրումով խաղադաշտի պահպանիչ շերտը մասնակիցը կարող է մաքրել միայն և միայն այն դեպքում, եթե «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրված/խաղարկված/խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը հավասար է 21-ի, այլապես տոմսը կհամարվի վճարման ոչ ենթակա:

- Ակնթարթային մասով շահելու անհրաժեշտ պայմանն այն է, որ «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրված խաղավանդակների թվերի պարզ թվաբանական հանրագումարը մեծ կամ հավասար լինի «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի մաքրված երկու խաղավանդակների թվերի պարզ թվաբանական հանրագումարից կամ հանրագումարին:

Ակնթարթային մասով մասնակիցը կարող է շահել կամ միայն «Շահում» նշագրումով խաղադաշտի շահումը կամ «Շահում» նշագրումով և «Բոնուս» նշագրումով խաղադաշտերի շահումները միասին:

Այսպես-եթե «Խաղացող» նշագրումով խաղադաշտի պահպանիչ շերտից մաքրված խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը մինչև /ներառյալ/ 20 է և այդ հանրագումարը մեծ է կամ հավասար «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի երկու խաղավանդակների թվերի պարզ թվաբանական հանրագումարից կամ հանրագումարին, ապա մասնակիցը շահում է «Շահում» խաղադաշտի տակ գրված շահումը (որոշակի գումար կամ իր):

- Եթե «Խաղացող» նշագրումով խաղադաշտի պահպանիչ շերտից մաքրված խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը հավասար է 21-ի, ապա մասնակիցը շահում է և «Շահում» գրառմամբ և «Բոնուս» գրառմամբ խաղադաշտերի պահպանիչ շերտերի տակ գրված շահումները (որոշակի գումար կամ իր):

Տոմսը ակնթարթային մասով շահում չունի՝

եթե «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրված խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը մեծ է 21-ից,

եթե «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրված խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը փոքր է «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի մաքրված երկու խաղավանդակների թվերի պարզ թվաբանական հանրագումարից;

Շահումների տեսակը նախատեսվում է գումարային և իրային:

2. Հեռուստախաղարկության մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը

Հեռուստախաղարկությանը մասնակցում է այն տոմսը (տոմսերը), որի շահում նշագրումով խաղադաշտում գրված է «TV» բառը և 1-ից 21 միջակայքին պատկանող 2 տարբեր թվեր:

«ՀԱՅ ԼՈՏՈ» վիճակախաղի հեռուստախաղարկությունը իրականացվելու է 1-ից 21 թվերով համարակալված խաղաքարերով, որոնք ստուգվում և լցվում են հատուկ չթափանցող պարկի մեջ, որի դատարկ լինելը հավաստում են տվյալ վիճակահանության հանձնաժողովի անդամները: Վիճակահանությունն իրականացնելու համար պարկից հաջորդաբար հանվում է երկու խաղաքար: Հեռուստախաղարկությունում շահում է այն տոմսը կամ տոմսերը, որում (որոնցում) շահում նշագրումով խաղադաշտում «TV» բառի հետ միասին գրված երկու թվերը համընկնում են պարկից հանված երկու խաղաքարերի վրա նշված թվերին: Եթե պարկից հանված երկու խաղաքարերով շահում չգրանցվի, ապա հանված խաղաքարերը հետ կլցվեն պարկի մեջ և խաղաքարեր հանելը կշարունակվի այնքան, մինչև վերը նշված պայմանով կգրանցվի շահում: Հեռուստախաղարկության համար կազմակերպիչը կնախատեսի շահումային ֆոնդ, որը հավասարաչափ կբաշխվի վերոհիշյալ կարգով շահած տոմսերի միջև:

«ՀԱՅ ԼՈՏՈ» վիճակախաղի խաղարկությունը կանցկացվի տարեկան առավելագույնը երկու անգամ:

3. ՈՒՇԱՂԻՈՒԹՅՈՒՆ

Տոմսը ենթակա չէ վճարման, եթե՝

ա. «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրված խաղավանդակներում առկա թվերի պարզ թվաբանական հանրագումարը հավասար չէ 21-ի և մաքրված է «Բոնուս» նշագրումով խաղադաշտը:

բ. խախտված է «Խաղացող» նշագրումով խաղադաշտի մաքրման 1 կետով սահմանված կարգը;

գ. Տոմսն էականորեն վնասված է: Վնասվածքը համարվում է էական, եթե բացակայում է տոմսի որևէ հատված (այսինքն՝ տոմսն ամբողջական չէ) կամ անընթեռնելի է խաղարկային դաշտերից որևէ մեկը:

դ. Կազմակերպչի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խախտված է տոմսի՝ շահելու պատահականության սկզբունքը, այսինքն՝ տոմսի վրա կատարվել է ֆիզիկա-քիմիական

մեթոդների կամ տեխնիկական միջոցների կիրառում կամ ներկայացված տոմսը կեղծված է (առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ):

ե. Մաքրված է տոմսի «Չջնջել» նշագրումով դաշտը:

4. Ակնթարթային մասի շահումները կտրվեն մինչև հեռուստախաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ:

Հեռուստախաղարկության մասի շահումները կտրվեն հեռուստախաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

Շահումները կտրվեն ընկերության գրասենյակից՝ ք. Երևան, Ամիրյան 26 հասցեից, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները՝ նաև տոմսերի իրացման կետերից:

Անհրաժեշտության դեպքում շահող մասնակիցը պարտավոր է ներկայացնել անձնագիր կամ անձը հաստատող օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ:

5. Տոմսում չներառված մնացած պայմանները կարգավորվում են «ՀԱՅ ԼՈՏՈ» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով՝ համաձայնեցված ՀՀ Ֆինանսների նախարարության հետ:

«ՀԱՅ ԼՈՏՈ» N 2 վիճակախաղի հեռուստախաղարկությունը կկայանա «Հ2» (Հայկական երկրորդ) (ք. Երևան, Աջափնյակ Գ-3 թաղ., 3/1 հասցե) հեռուստաալիքի ուղիղ եթերով « » _____ 2018թ. ժամը _____-ին: Գինը՝ 400 ՀՀ դրամ:

Վիճակախաղի կազմակերպիչ՝ «ԴԻՋԻԳԵՅՄ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն:

«Armenia Lottery»



«Արմենիա Լոթերի»